

Կարծիք

Եվա Ժորայի Մնացականյանի «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» դոկտորական ատենախոսության մասին

Հովհաննես Թումանյանը հայ գրականության այն դեմքերից է, որի ստեղծագործությունը նրա գրական առաջին քայլերից մինչև մեր օրերը հայ գրականագիտության ու գրաքննադատության համար դարձել է մշտական թեմա: Պաշտպանության ներկայացված դոկտորական ատենախոսության վրա Եվա Մնացականյանն աշխատել է երկար տարիներ: Բավական է փաստել, որ նա բարեխիղճ կազմել է ծանոթագրել, հրատարակության պատրաստել «Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» անթոլոգիայի I հատորը (Երևան, 2019, 860 էջ), որն անմիջականորեն կապվում է պաշտպանության ներկայացված ատենախոսության հետ:

Ատենախոսությունն անդրադառնում է ոչ միայն Թումանյանի կենդանության օրոք գրաքննադատության մեջ եղած հետազոտություններին, այլև ներկայացնում է թումանյանագիտության ընթացքը մինչև մեր օրերը:

Ինչպես պարզ երևում է ատենախոսությունից, Մնացականյանը չի անտեսել անգամ Թումանյանի կենդանության ժամանակ եղած նույնիսկ ոչ այնքան առաջնային հոդվածներն ու արձագանքները՝ դրանց նկատմամբ ցուցաբերելով արդիական մոտեցումներ:

Եվա Մնացականյանի կազմած անթոլոգիան ընկած է նրա ատենախոսության հիմքում, իսկ այդ անթոլոգիան խիստ շահեկան է ապագայի թումանյանագետների համար, որովհետև մեկտեղված է մի նյութ, որը հեշտացնելու է ապագա թումանյանագետի աշխատանքը: Եզակի թումանյանագետ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը թումանյանագետների օրինակելի դպրոց ստեղծեց ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի

անվան գրականության ինստիտուտում: Եվա Մնացականյանն այդ դպրոցի սաներից է:

Մնացականյանի ստենախոսությունը գերհագեցած է փաստական նյութով: Այդ նյութը մատուցվում է հետազոտության չորս գլուխներում և նրանց ենթագլուխներում:

Գրականագիտական միտքը հեշտությամբ տեսնում է Թումանյանի ստեղծագործությանը տրված գնահատականների էվոյուցիան: Բնականաբար էվոյուցիան պետք է սկսվեր Թումանյանի «Բանաստեղծություններ» անդրանիկ գրքին ուղղված հոդվածների ուսումնասիրությամբ:

Թումանյանի առաջին գնահատողներից էր Մանուկ Աբեղյանը, որին հատկապես գրավել էր բանաստեղծի գրվածքների ժողովրդայնությունը: Մնացականյանը նկատում է, որ այդ թեզը լայնորեն շրջանառվել է խորհրդային թումանյանագիտության մեջ, մինչդեռ «Աբեղյանի ակնարկած ժողովրդայնությունը, որ, իրոք, Թումանյանի ստեղծագործության համակարգային ամբողջականությունը պայմանավորող գլխավոր գործոններից է, կապ չունի որևէ հասարակական-գաղափարական կամ կուսակցական նախասկզբի հետ» (էջ 73):

Շատ կարևոր է այն փաստը, որն առաջին անգամ վկայակոչել է հիանալի գրականագետ Արամ Ինճիկյանը՝ օգտագործելով Տիգրան Փիրումյանի «Մի ճշմարիտ բանաստեղծ (պ. Հովհ. Թումանյանի նոր գրքի առթիվ)» հոդվածը, որի ամբողջական բնագիրն առաջին անգամ տպագրության է պատրաստել Եվա Մնացականյանը: Ատենախոսության մեջ կարդում ենք. «Փիրումյանն այն հաստատ համոզմունքին է, որ Թումանյանն իր մի շարք գործերով միանգամայն իրավունք կունենա կանգնելու էվրոպական հայտնի բանաստեղծների՝ Բայրոնի, Շիլլերի, Գյոթեի, Պուշկինի, Լերմոնտովի հետ «մի գծի վրա»» (էջ 93):

Թեր ու դեմ կարծիքների ամբողջության մեջ է ներկայացված «Լոռեցի Սաքո» պոեմը, որի հոգեբանական հիմքերը ոմանք պաշտպանել են, ոմանք՝ ոչ: Հարցի

պատասխանը տվել է Էդ. Ջրբաշյանը՝ մատնացույց անելով Սաքոյի կերպարի փաստական հիմքը, որը վկայակոչել է հենց ինքը՝ Թումանյանը:

Ատենախոսության առաջին գլխի կարևոր ենթաբաժիններից մեկը վերաբերում է Թումանյանի թարգմանական արվեստին: Թումանյանը եվրոպական դասականներին և ընդհանրապես արտասահմանյան գրականությունը թարգմանում էր ռուսերենից, սակայն դա անում էր մեծ պատասխանատվությամբ: Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» թարգմանելուց հետո դիմել է անգլերենի քաջ գիտակ Միխիթար Տեր-Անդրեասյանին, որն անթաքույց գրել է. «Շիլիոնդ համեմատեցի բնագրի հետ: Ուղղակի զարմանալի է, թե ինչպե՞ս է հաջողվել քեզ անգլերեն չիմանալով մի այդպիսի հոյակապ թարգմանություն տալ մեզ» (էջ 118):

Ատենախոսության մեջ շեշտված է շատ հայտնի այն իրողությունը, թե Թումանյանի ստեղծագործության մեջ երևան են եկել հայ իրականության բացառիկ զգացողությունը և դրա գեղարվեստական վերակերտումը: Հիմնավորվում է, թե ինչպես «Բանաստեղծություններ» երրորդ ժողովածուով Թումանյանը դառնում է արևելահայ բանաստեղծության կենտրոնական դեմքերից մեկը:

Թումանյանի մանկագրությունը գերազանց է, սակայն այն թերևս ամենից շատ է քննադատության ենթարկվել:

Թումանյանին քննադատել են հայ ժողովրդական բանահյուսությունից գրագողություն անելու համար: Ովքեր զբաղվել են կամ զբաղվում են հայ ժողովրդական բանահյուսական արժեքների ուսումնասիրությամբ, կարող են միայն հիանալ, թե ինչն է ընտրել Թումանյանը, ինչն է փոխել ժողովրդականից, ինչն է պահպանել նույնությամբ, որովհետև քաջ գիտակցել է, որ ժողովրդի ստեղծածը կատարյալ է: Բերենք կողք կողքի «Արտուտիկ» բանաստեղծությունը՝ ըստ Գարեգին Սրվանձոյանցի գրառման և ըստ Հովհաննես Թումանյանի:

ԱՐՏՈՒՏԻԿ

Արտուտիկ,

Նախշուն տոտիկ.

Իջնեն կալեր,

Գողտիկ մողտիկ,

Ընտրեն քարեր,

Ուտեն կուտիկ,

Կը ծըլվլան

Կըլթիկ կըլթիկ (Տե՛ս Գ. Սրվանձոյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 539, պահպանված է մեջբերման ուղղագրությունը և կետադրությունը):

ԱՐՏՈՒՏԻԿ

Արտուտիկ,

Նախշուն տոտիկ

Իջնեն կալեր

Գողտիկ-մողտիկ,

Ընտրեն քարեր,

Ուտեն կուտիկ,

Կը ծըլվլան

Կըլթիկ-կըլթիկ (Տե՛ս Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. I, Երևան, 2018, էջ 256, պահպանված է մեջբերման ուղղագրությունը և կետադրությունը):

Ատենախոսը մանկապատանեկան գրվածքների մեջ է գետեղել Թումանյանի շատ սիրված «Սասունցի Դավիթ» և «Թմկաբերդի առումը» պոեմները: Այս երկու գործերն էլ ենթարկվել են նույնիսկ խիստ քննադատության: Հետաքրքիր է, որ 1916-ին Ալեքսանդր Սպենդիարյանը, հիացած «Թմկաբերդի առումը» պոեմով, որոշում է գրել օպերա և խնդրում է Թումանյանին գրել լիբրետոն: Թումանյանը խոստանում է, սակայն ծայրահեղ զբաղվածության պատճառով խոստումը չի կատարում: Լիբրետոն

գրել է ռուս բանաստեղծուհի Սոֆյա Պարնոկը՝ լիբրետոյում հաստատվածներ քաղելով նաև «Անուշ» պոեմից: Մա սավում է, որպեսզի հասկանալի դառնա, որ Թումանյանին ուղղված քննադատությունը անկողմնակալ չի եղել:

Ատենախոսության 406-րդ էջի 960-րդ ծանոթագրությունը արժեք տեղափոխել բուն շարադրանքի մեջ, որովհետև միշտ չէ, որ Արսեն Տերտերյանը ճիշտ գնահատականներ է տալիս, և դա հստակ ներկայացնում է Էդ. Ջրբաշյանը:

Հայ ժողովրդի երկու հանճարները՝ Արովյանը և Թումանյանը, խիստ մտահոգ էին հայ ժողովրդի ճակատագրով, որովհետև Անդրկովկասի երեք ազգերը միմյանց հետ պատմական խնդիրներ ունեին: Հասարակական գործունեությամբ և իր գրվածքներով Թումանյանը փորձում էր ներգործել այդ դժվարին խնդիրների վրա: Տեղին է Սամսոն Փիրցխալավայի վրացական «Ժողովրդական գործ» պարբերականում տպագրված «Հովհաննես Թումանյան» հոդվածի անդրադարձը, որում հեղինակն ասում էր. «Թո՛ղ, ինչպես անցյալում էր, ապագայում էլ Հովհաննես Թումանյանի անձը լինի հայ և վրաց ժողովուրդների եղբայրական փոխկապվածության արդար հենքը» (էջ 458):

Ատենախոսության մեջ լայնորեն լուսաբանված է Թումանյանի ծննդայն 50 և ստեղծագործական կյանքի 30-ամյա հորեյանները, և ներկայացվում է նրա «Հորեյանների դեմ» փոքրիկ հոդվածը: Թումանյանը ահազանգում է, որ հայ իրականության մեջ «հորեյանները համաճարակի կերպարանք են առնում» (Տե՛ս Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 554): Ատենախոսը Թումանյանի հորեյանական հանդիսությունները համարում է անկրկնելի (էջ 481):

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվում է ռուս մտավորականության՝ Թումանյանին տրված գնահատականները՝ Յու Վեսելովսկի, Վ. Բրյուսով, Ս. Գորոդեցկի և ուրիշներ:

Թումանյանը շատ կարճ ապրեց, և նրա կյանքի վերջին երեք տարիներին Հայաստանը դարձել էր խորհրդային: Ատենախոսն անդրադարձ ունի 1922-ի հունիսի 14-ին հրապարակված «Երեքի դեկլարացիային», որի հեղինակներից մեկն էլ

հանճարեղ Եղիշե Չարենցն էր: Եվ տեղին է անդրադարձը այդ «Դեկլարացիայի» ընդդիմախոսների կարծիքներին՝ Հ. Սուրխաթյան, Պ. Մակինցյան, Տ. Հախումյան: Նույնքան տեղին է խոսքը Չարենցի 1923-ի ապրիլի 3-ին «Խորհրդային Հայաստան» թերթում Թումանյանի հիշատակին նվիրված «Երկու աշխարհի սահմանագծում» խորհմաստ հոդվածի մասին:

Ատենախոսության չորրորդ գլխում են ներկայացված Թումանյանի քառյակներին տրված գնահատականները: Թումանյանի քառյակները, առանց չափազանցության, համաշխարհային գրականության գոհարներ են, որոնք մեր ազգային ճակատագրի բերումով չեն թարգմանվում աշխարհի տարբեր լեզուներով և չեն տարածում իրենց մարդասիրական, համամարդկային և հավերժական գաղափարները:

Հայտնի է, որ Թումանյանը Պոլսում չունեցով իր սպասած ընդունելությունը՝ չնայած արևմտահայ առաջադեմ միտքը գիտակցում է Թումանյանի հանճարեղ լինելը:


Կարելի է երկար գրել Եվա Մնացականյանի ատենախոսության մասին: Հարկ է սակայն, նշել նաև թերացումներ: Մեր կարծիքով թերացումը ծավալի մեջ է, կարելի էր ավելի սեղմ գրել:

Կատարված է հսկայական ջանադիր, բարեխիղճ աշխատանք, և ատենախոսը լուծել է իր առջև դրված խնդիրը: Նրա ատենախոսությունն ունի կիրառական արժեք հատկապես «Հայ գրաքննադատություն» առարկան բուհերում դասավանդելիս և կարող է դառնալ բանասիրական ֆակուլտետների մագիստրատուրայում առանձին դասընթացի թեմա:

Եվա Ժորայի Մնացականյանի «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» դոկտորական ատենախոսության սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսությունը հաջողված է, և նրա հեղինակը՝ Եվա Մնացականյանը, արժանի է ժ.01.01 «Հայ դասական գրականություն մասնագիտությամբ» ստանալու բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը:

Աելիտա Դուրխանյան



ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

23.11.2021

Պրոֆեսոր Ա. Դուրխանյանի
ստորագրությունը հաստատվում է:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտքարտուղար



Մարիամ Իսախանյան